ԵՐԶԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՀ «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ում 2025թ-ի ընթացքում կատարված աշխատանքների

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(010) 688204

reserveparksnco@env.am

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ում 2025թ-ի ընթացքում կատարված աշխատանքների ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի /այսուհետ Կազմակերպություն/ ենթակայությամբ գործող՝ ԲՀՊՏ և ԲՊՏ տարածքներում 23598.62 հա մակերեսով տարածքի մոնիթորինգի, խնամքի, իրականացված միջոցառումների և կատարված աշխատանքների մասին՝

- **«Էրեբունի» պետական արգելոց 118.75 հա հիմնադրվել է 1981թ**
- **«Որդան կարմիր» պետական արգելավայր 219.85 հա հիմնադրվել է 1987թ**
- **«Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայր 5202.86 հա հիմնադրվել է 2009թ**
- **«Ջերմուկի ջրաբանական» պետական արգելավայր 17.369.73 հա հիմնադրվել է 2009թ**
- **«Զիկատար» պետական արգելավայր 150 հա հիմնադրվել է 2010թ**
- **Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկ 35 հա հիմնադրվել է 1933թ**
- **Վանաձորի «Ժ. Սարուխանյանի անվան» դենդրոպարկ 1.944 հա հիմնադրվել է 1935թ**
- **Բերդի «Սորաններ» դենդրոպարկ 62.17 հա հիմնադրվել է 1962թ**
- **Իջևանի «Դենդրոպարկ» 14.6 հա հիմնադրվել է 1962թ**
- **«Ջրվեժ» անտառպարկ 423.72 հա հիմնադրվել է 1977թ**

1. **Իրականացվելել են մոնիթորինգի և խնամքի միջոցառումներ՝**

Կազմակերպության ենթակայությամբ գործող տարածքներում, մաքրվել և էտվել են ծառերի չորացած ճյուղերը: Տնկվել են Բարդու, Տանձենու, Ձիակասկի, Մայրու, Տոսախի, Հիբիսկուսի, Օճառածառի, Հացենու, Գիհու, Տոսախի և Ասպիրակի, Կաղնու, Ընկուզենու տնկիներ: Իրականացվել է մոնիթորինգ՝ «Էրեբունի» պետական արգելոցում, «Որդան կարմիր», «Ջերմուկի ջրաբանական», «Հանքավանի ջրաբանական» և «Զիկատար» պետական արգելավայրերում, Ստեփանավանի «Սոճուտ», Վանաձորի «Ժ. Սարուխանյանի անվան», Իջևանի «Դենդրոպարկ», Բերդի «Սորաններ» դենդրոպարկերում և «Ջրվեժ» անտառպարկում:

2. Կազմակերպության տարածքում գիտաճանաչողական գիտաարտադրական, էկոկրթական և հասարակության իրազեկման մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ ԲՈՒՀ- երի և ուսումնական հաստատությունների հետ՝

2.1. Գիտաարտադրական պրակտիկաների կազմակերպում և պայմանագրերի կնքում՝ անցկացվել է

3 պրակտիկա

- Կազմակերպության ենթակայությամբ գործող «Ջրվեժ» անտառպարկում իրենց արտադրական պրակտիկան են անցկացրել Նոր Գեղիի ակադեմիկոս Գ. Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի, թվով 15 ուսանողներ: Պրակտիկան անցկացրել են Կազմակերպության գիտության և էկոտուրիզմի բաժանմունքի աշխատակիցները, ծանոթացնելով անտառպարկի կենսաբազմազանությանը, վայրի բույսերին և ներմուծված տեսակային կազմին:
- Կազմակերպության գիտության բաժինը կազմակերպել է արտադրական պրակտիկա Երևանի պետական համալսարանի աշխարհագրության ֆակուլտետի, թվով 7 ուսանողների համար՝ «Ջրվեժ» անտառպարկում: Պրակտիկայի ընթացքում ուսանողները ծանոթացել են տարածքի կենսաբազմազանությանը, լանդշաֆտին և նախատեսվող բնապահպանական նախագծերին: Ներկայացվել են անտառպարկի էկոհամակարգերը, տեղական բուսական և կենդանական աշխարհը, ինչպես նաև բնության պահպանության և վերականգնման միջոցառումները: Շեշտվել է գիտական համագործակցության, մասնագիտական փորձի փոխանակման և բնապահպանական կրթության կարևորությունը:
- Կազմակերպության ենթակայությամբ գործող Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկում արտադրական պրակտիկա են ունեցել Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի թվով՝ 26 ուսանողներ:
- Կնքվել է համագործակցության հուշագիր Կազմակերպության և Երևանի տարածաշրջանային N1 պետական քոլեջի հետ՝ արտադրական

պրակտիկաներ կազմակերպելու և թեմատիկ ու ոչ թեմատիկ միջոցառումներ իրականացնելու նպատակով:

- Կազմակերպության ենթակայությամբ գործող «Ջրվեժ» անտառպարկում անցկացվել են ուսանողական արտադրական պրակտիկա, որին մասնակցել են ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի «Կենսաբազմազանության ուսումնասիրություն և պահպանություն» մագիստրոսական ծրագրի 1-ին և 2-րդ կուրսի, թվով՝ 11 ուսանողները:
- Կազմակերպության ենթակայությամբ գործող «Ջրվեժ» անտառպարկում անցկացվել են ուսանողական արտադրական պրակտիկա Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի պետական քոլեջի 3-րդ կուրսի, թվով՝ 10 ուսանողների հետ:
- Կազմակերպության ենթակայությամբ գործող «Ջրվեժ» անտառպարկում անցկացվել են 2 ուսանողական արտադրական պրակտիկաներ Երևանի պետական համալսարանի 1-ին և 2-րդ կուրսերի, թվով՝ 12 «Կենսաբանություն» ֆակուլտետի ուսանողների համար: Կազմակերպության գիտության բաժնի աշխատակիցները ներկայացրել են անտառպարկի կենսաբազմազանությունը, դրա պահպանության և ուսումնասիրության կարևորությունը, ինչպես նաև իրականացվող բնապահպանական աշխատանքները:
- Կազմակերպության ենթակայությամբ գործող «Ջրվեժ» անտառպարկում անցկացվել են ուսանողական արտադրական պրակտիկա Երևանի պետական համալսարանի «Կենսաբանություն» ֆակուլտետի, թվով՝ 8 ուսանողների հետ:

2.2. Բնակչության շրջանում էկոլոգիական իրազեկություն և էկոկրթություն՝

- Ս/թ Մարտի 21-ին, անտառների միջազգային օրվա առթիվ շրջակա միջավայրի նախարարության «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել է միջոցառում-մրցույթ «ԷԿՈ-ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ» թեմայով: Միջոցառում-մրցույթին մասնակցել են Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ա.Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի, Հայաստանի մանկավարժական համալսարանի և Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանողները: Միջոցառմանը ներկա էր նաև շրջակա միջավայրի նախարարության կենսաբազմազանության և քաղաքականության վարչության բաժնի աշխատակիցը, ով ցուցաբերեց իր մասնագիտական աջակցությունը: Միջոցառում-մրցույթի շրջանակում մասնակիցները ներկայացրել են իրենց կողմից պատրաստված տեսանյութերը՝ Կազմակերպության առաջադրված թեմաների վերաբերյալ: Բոլոր մասնակիցները խրախուսվեցին շնորհակալագրերով, սակայն առավել ակտիվ մասնակիցները արժանացան անհատական նվերների: Օրվա խորհուրդը ամրապնդելու նպատակով մասնակիցները ծառատունկ իրականացրեցին «Ջրվեժ» անտառպարկում: Միջոցառումը ամփոփվեց «ՎՈՒԴՍ» կենտրոնի կողմից ցուցադրված թեմատիկ կինոդիտմամբ:
- Ս/թ. մայիսի 18-ին «Սոճուտ» դենդրոպարկում անցկացվեց խորհրդանշական ծառատունկ՝ նվիրված Վիտալի Լեոնովիչի հիշատակին: Այդ օրը լրանում էր նրա 88-ամյակը: Նրա ծննդյան օրը նշանավորվեց որպես հիշողության, երախտագիտության և շարունակության խորհրդանիշ՝ նոր հիմնվող տնկարանում տնկվեցին մայրու 88 տնկիներ, որոնք խորհրդանշում են նրա անցած 88 տարիները: Ծառատունկին ներկա էր Վիտալի Լեոնովիչի դուստրը, որի ներկայությունն այդ օրը դարձրեց առավել հուզիչ և հիշարժան: Միջոցառմանը մասնակցեցին նաև Դիլիջանի թիվ 4 դպրոցի աշակերտները, ովքեր մեծ ջերմությամբ և պատասխանատվությամբ միացան բնության պահպանման այս կարևոր նախաձեռնությանը:

Միջոցառման կազմակերպման և անցկացման գործում ակտիվ մասնակցություն ունեցան «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի աշխատակիցները և «Սոճուտ» դենդրոպարկի անձնակազմը՝ ի հիշատակ իրենց գործընկերոջ, ընկերոջ և ղեկավարի: Ծառատունկն ուղեկցվեց դասական երաժշտության կենդանի կատարումներով՝ ապահովված Ստեփանավանի արվեստի դպրոցի սաների կողմից, ինչը միջոցառմանը հաղորդեց նաև մշակութային շունչ: Այս հիշարժան օրը համընկավ Կենսաբազմազանության պահպանության միջազգային օրերի շրջանակին՝ ևս մեկ անգամ ընդգծելով բնության նկատմամբ հարգանքի և պահպանման նկատմամբ մեր համատեղ հանձնառությունը:

Միջոցառման կարգախոսն էր՝ «Երբ ծառ ես տնկում, ես ժպտում եմ», որը լիովին արտահայտում էր օրվա խորհուրդը: Յուրաքանչյուր տնկված ծառ դարձավ հիշողության, երախտագիտության և շարունակության խորհրդանիշ՝ ներկայացնելով մի մարդու, որի կյանքն ու գործը, ինչպես ծառի արմատները, խորապես ներդաշնակվել էին բնության հետ:

Ս/թ. հունիսի 05-ին Շրջակա միջավայրի համաշխարհային օրվա շրջանակում, Բերդի «Սորաններ» դենդրոպարկում իրականացվեց բնապահպանական թեմատիկ միջոցառում, որը կազմակերպվել էր Շրջակա միջավայրի նախարարության «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի և Հայաստանի բնության պետական թանգարանի կողմից: Միջոցառման նպատակն էր խթանել հանրային մասնակցությունը բնության պահպանության գործընթացներում, խորացնել կապը շրջակա միջավայրի հետ և ստեղծել համագործակցային հարթակ՝ բնապահպանական կրթության, քննարկումների և մշակութային ներգրավվածության համար: Միջոցառմանը մասնակցեցին գործընկեր կառույցների ներկայացուցիչներ, աշակերտներ, ուսանողներ, բնապահպաններ, համայնքի ներկայացուցիչներ և այլ հետաքրքրված անձիք: Ծրագիրը ներառել է էկո-կրթական կանգառներ, կիրառական արվեստի

գոտիներ, բնաճանաչողական խաղեր, թեմատիկ ելույթներ և բաց զրույցներ: Օրվա ավարտին ներկաները վայելեցին բացօթյա կինոդիտում՝ լուսանկարիչ, կենսաբան Հրաչ Ղազարյանի հեղինակային «Հայաստան, որը չենք տեսել» բնապահպանական ֆիլմի ցուցադրությամբ: Միջոցառումը լուսաբանվել է «Տավուշ ՀԸ»-ի կողմից:

- Կազմակերպության «Ջրվեժ» անտառպարկում անցկացրել է երիտասարդներին միավորող և բնությանը մոտեցնող միջոցառում՝ «Երիտասարդական բնաճանաչում» խորագրով, որը իրականացվել է ՊՈԱԿ-ի և Երևանի տարածաշրջանային N1 քոլեջի միջև կնքված համագործակցության հուշագրի շրջանակում՝ վերջինիս ուսանողների ակտիվ մասնակցությամբ: Միջոցառումը մեկնարկվել է ողջույնի խոսքով և մասնակիցների ջերմ ընդունելությամբ, որին հետևել է հետաքրքիր խաղ-մրցույթը՝ «Գտիր ինձ անտառպարկում»: Խաղի ընթացքում մասնակիցները բացահայտել են անտառպարկի բուսատեսակների առանձնահատկությունները՝ յուրահատուկ ճանաչողական արկածի շրջանակում: Այնուհետև երիտասարդները մասնակցել են լուսանկարչական արշավին, ֆիքսել բնության գեղեցիկ պահերն ու մթնոլորտը, իսկ հետո՝ բացօթյա ցուցադրության ժամանակ, ներկայացրել են իրենց աշխատանքները՝ կիսվելով տպավորություններով:Հաջորդ փուլում իրականացվել է խորհրդանշական սերմնացան «Կյանք սերմնաբաժակում» նախաձեռնության շրջանակում: Յուրաքանչյուր մասնակից սերմ ցանեց՝ ընդգծելով բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի և շարունակական պահպանության կարևորությունը:
- Կազմակերպության նախաձեռնությամբ «Ջրվեժ» անտառպարկում անցկացվել է կրթական-բնապահպանական միջոցառում, որի նպատակն էր բարձրացնել հանրային իրազեկվածությունը ծառերի պահպանության և դրանց հանդեպ հոգատար վերաբերմունքի կարևորության շուրջ: Մասնակիցները շրջայց իրականացրին անտառպարկում՝ ծանոթանալով ծառերի այն օրինակներին, որոնք խոշտանգվել են և դարձել են մարդկային վանդալիզմի զոհ: Ծառերի

կեղևի վրա փորագրված գրառումները, մեխերով և կտրած հատվածներով հասցված վնասները ոչ միայն խաթարում են նրանց բնականոն աճն ու գոյատևումը, այլև սպառնում ամբողջական էկոհամակարգին: Միջոցառման շրջանակում կազմակերպվեց զրույց հոգեբանի հետ. քննարկվեցին այն հոգեբանական և սոցիալական պատճառները, որոնք կարող են հանգեցնել նման վանդալ գործողությունների: Աշակերտների մասնակցությամբ անցկացվեցին ինտերակտիվ խաղեր, որոնք նպաստեցին բնության հանդեպ համակեցության ու պատասխանատվության գիտակցության ձևավորմանը: Նրանք նաև գրեցին նամակներ ծառերին՝ արտահայտելով իրենց սիրո, հոգատարության և հույսի ուղերձները: Միջոցառման ավարտին կազմակերպվեց էկո-ֆլեշմոբ՝ ուղերձ հղելով հասարակությանը.

«Ծառը կենդանի է-մի՛ խոշտանգիր այն»:

Այս նախաձեռնությունը ևս մեկ անգամ ընդգծեց, որ ծառերի պահպանումը ոչ միայն էկոլոգիական, այլև մշակութային ու բարոյական պարտականություն է: Մեր համատեղ պատասխանատվությունն է կերտել մի ապագա, որտեղ բնությունը պաշտպանված է, իսկ մարդը՝ դրա բարեկամը:

- Սեպտեմբերի 23-ին նշվեց Բնության հատուկ պահպանվող տարածքների օրը, որը նշանավորվեց գիտական դաշտային արշավով «Որդան Կարմիր» պետական արգելավայրում: Միջոցառումը կազմակերպվել էր Կազմակերպության կողմից՝ տնօրեն Արսեն Միրզոյանի նախաձեռնությամբ և ՊՌԱԿ-ի գիտության բաժնի ակտիվ ներգրավմամբ: Արշավն իրականացվեց առավոտյան՝ միջատների ակտիվության ժամին՝ նպատակ ունենալով ընդգծել բնության հատուկ պահպանվող տարածքների կարևորությունը և ուսումնասիրել որդան կարմիր միջատի կենսաբանական առանձնահատկությունները՝ նրա բնական միջավայրում:
- Արշավի ընթացքում մասնակիցները՝
- Կատարել են դաշտային դիտարկումներ,

- Արձանագրել միջատի վարքագծային դրսևորումները,
- իրականացրել լուսանկարահանումներ և գիտական նոթագրություն:
- Երևանի պետական համալսարանի Կենսաբանության ֆակուլտետի ուսանողները հանդես են եկել միջատի վերաբերյալ տեղեկատվական ներկայացումներով, իսկ միջատաբան Մարկ Քալաշյանը մասնագիտական մեկնաբանություններով առաջնորդել է ամբողջ ուսումնասիրության ընթացքը: Քայլարշավի ավարտին կազմակերպվել են ամփոփիչ քննարկումներ, մասնակիցների հետ հարցազրույցներ, ինչպես նաև լուսանկարահանում՝ փաստելու գիտակրթական այս նախաձեռնության կարևոր պահերը: Միջոցառումը ծառայեց որպես հարթակ՝ վեր հանելու բնական արժեքների պահպանության խնդիրները, բարձրացնելու հանրային իրազեկվածությունը և խթանելու համագործակցությունը՝ ոլորտի մասնագետների, ուսանողների, գիտնական աշխատակիցների միջև:
- Կազմակերպության ենթակայությամբ գործող «Ջրվեժ» անտառպարկում հոկտեմբերի 11-ին իրականացվել է աշնանային ծառատունկ:Միջոցառմանը մասնակցել են Կազմակերպության աշխատակիցները, ինչպես նաև Ձորաղբյուրի միջնակարգ դպրոցի աշակերտներն ու Ֆրանս-Հայկական Մասնագիտական Ուսումնական Կենտրոն հիմնադրամի ուսանողները: Տնկվել է Ձիակասկ (Aesculus hippocastanum) տեսակին պատկանող ծառ, որն առանձնանում է իր գեղեցիկ սաղարթով և խոշոր տերևներով՝ նպաստելով տարածքի կանաչապատմանն ու կենսաբազմազանության պահպանմանը:
- Կազմակերպության ենթակայությամբ գործող Բերդի «Սորաններ» դենդրոպարկում հոկտեմբերի 18-ին իրականացվել է աշնանային ծառատունկ: Միջոցառմանը մասնակցել են Կազմակերպության աշխատակիցները, դենդրոպարկի անձնակազմը և ք. Բերդի թիվ 1 դպրոցի աշակերտները: Տնկվել են վայրի տանձենու (Pyrus elaeagnifolia) ծառեր, որոնք հայտնի են իրենց բարձր դիմացկունությամբ և բարդ բնապահպանական պայմաններում աճելու ունակությամբ:

- Կազմակերպության ենթակայությամբ գործող «Ջրվեժ» անտառպարկում հոկտեմբերի 27-ին իրականացվել է գեղեցիկ և ուսուցողական էկոկրթական միջոցառում, որը կազմակերպվել է Կազմակերպության կողմից՝ ք. Աբովյանի թիվ 2 հիմնական դպրոցի աշակերտների ակտիվ մասնակցությամբ: Միջոցառման նպատակն էր խթանել բնության հանդեպ սիրո, խնամքի և պատասխանատվության ձևավորումը դպրոցականների շրջանում՝ ուսուցման և գործնական գործունեության համադրությամբ: Աշակերտները մասնակցել են ձիակասկի (Aesculus hippocastanum) և կենսածառ արևելյանի կամ բիոտայի (Thuja orientalis) սերմերի հավաքման և ցանքի աշխատանքներին՝ իրենց ներդրումն ունենալով անտառպարկում ձևավորվող նոր դպրոց-տնկարանի ստեղծման գործում: Էկոկրթական ծրագրի շրջանակում աշակերտները ներկայացրել են նաև թեմատիկ քննարկում՝ «Ջրի դերը բույսի և հողի կյանքում», որի ընթացքում անդրադարձել են ջրի կենսական նշանակությանը բնության և մարդու կյանքի համար:
- «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի «Ջրվեժ» անտառպարկում կազմակերպել է բնապահպանական մրցույթ-նախագիծ՝ ուղղված թափոնների ստեղծարար վերաօգտագործմանը և թռչնաշխարհի պահպանությանը: Մասնակցել են Աբովյանի թիվ 2 և թիվ 7 դպրոցների աշակերտները, որոնք թափոնային նյութերից պատրաստել են թռչունների ֆունկցիոնալ բներ: Աշխատանքները տեղադրվել են անտառպարկում՝ նպաստելով կենսաբազմազանության պահպանման պայմանների բարելավմանը: Հաղթողներին շնորհվել են բնապահպանական գրքերով և այցելության նվեր-տոմսերով, իսկ բոլոր մասնակիցները ստացել են հավաստագրեր:
- Դեկտեմբերի 11-ին՝ Լեռների միջազգային օրվա կապակցությամբ, Շրջակա միջավայրի նախարարության «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ը Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանողների հետ իրականացրել է կրթական-բնապահպանական միջոցառում: Միջոցառման ընթացքում ուսանողները ծանոթացել են

լեռնային էկոհամակարգերի կենսաբազմազանությանը, Հայաստանի լեռների աշխարհագրական ու կենսաբանական արժեքներին, ինչպես նաև մարդու ազդեցությամբ պայմանավորված խնդիրներին: Քննարկվել է էկոտուրիզմի զարգացումը, դրա օգուտները տեղական համայնքների համար և բնապահպանությունը զբոսաշրջության հետ համատեղելու հնարավոր ուղիները: Ուսանողները մասնակցել են թեմատիկ քննարկումների և ներկայացրել իրենց գաղափարները՝ ուղղված լեռների պահպանությանն ու կայուն օգտագործմանը:

- 2025 թվականի ընթացքում իրականացված էկոկրթությանն ու դաստիարակության միջոցառումների ընթացքում գրանցվել են թվով 757 մասնակիցներ:

ՇԱՌԵՐԸ
ՄԱՐԴԿԱՅԻՆ
ՎԱՅՐԵՆԻԱՄԻ ՀԱՄԱՐ

2.3 Ռեկրեացիայի կամ հանգստի կազմակերպմանն ուղղված միջոցառումներ

Կազմակերպության ենթակայության տակ գտնվող «Ջրվեժ» անտառպարկում կազմակերպության գիտաշխատողները իրականացրել են ինտենսիվ էկոկրթական շրջայցեր՝ նախատեսված տարբեր տարիքային խմբերի և կրթական հաստատությունների համար: Շրջայցերը ներառել են հանրապետության առաջատար կրթահամալիրների, միջնակարգ ու հիմնական դպրոցների, ինչպես նաև մի շարք մասնավոր, ավագ, հատուկ և համայնքային ուսումնական հաստատությունների մասնակցություն: Էկոկրթական ծրագրերին միացել են «Մխիթար Սեբաստացի», «Այբ», «Արեգնազան», «Հակոբ Կոջոյան», «Բյուրական», «ՄԱՎ», Անատոլ Ֆրանսի ֆրանսիական և այլ կրթահամալիրներ, Երևանի թիվ 17 հատուկ դպրոցը, ինչպես նաև մայրաքաղաքի և Աբովյան քաղաքի բազմաթիվ դպրոցներ՝ № 187, 87, 134, 143, 66, 51, 181, 155, 186,160, 88, 68, 59, 61, 32, 77, 166: Մասնակցել են նաև Աբովյանի թիվ 2, թիվ 7 և թիվ 3, ինչպես նաև Ջրվեժի, Վարդաբլուրի և Ակունքի միջնակարգ դպրոցները:

Ծրագրերին ընդգրկվել են մի շարք ուսումնական կենտրոններ ու զարգացման ծրագրեր, այդ թվում՝ «Իմ ուղի», «Ազատ Միտք», «Քիդնես», «Քուլ Քիդս»,

«Դրախտիկ», «Ալավերդյան» լեզվի կենտրոն, «Աուտիզմ» Ազգային հիմնադրամ, «Կապիբարա» գիտական ակումբ, «Լուսե տնակ» ստեղծարար կենտրոն, «Ավիաուսումնական կենտրոն» և այլք: Շրջայցերին մասնակցել են նաև նախադպրոցական հաստատություններ՝ Երևանի թիվ 110, Աբովյանի թիվ 110, «Վալդորֆ-Մարիա» և Ձորաղբյուրի մանկապարտեզները, ինչպես նաև «Խորամանկ» մանկապարտեզի ու ճամբարի սաները:

Էկոկրթական այցերին ներգրավվել են նաև բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ Երևանի պետական համալսարանը, Շուշիի տեխնոլոգիական համալսարանը, Ք. Քուշնարյանի անվան արվեստի դպրոցը, «Գեղարվեստի ակադեմիան», ինչպես նաև «Հ.Մ.Ը.Մ. Արցախ» ՀԿ-ն, Դաչա ճամբարը և ՀՀ առողջապահության նախարարության սաները:

Տարվա ընթացքում իրականացված լայնածավալ էկոկրթական աշխատանքները նպաստել են բնապահպանական գիտելիքների տարածմանն ու համատեղ կրթական համագործակցությունների ընդլայնմանը:

Էկոկրթական ծրագրերին մասնակցել է ընդհանուր առմամբ 4507 /212 խումբ/ սան և այցելու:

2.4 Էկոզբոսաշրջության զարգացմանն ուղղված միջոցառումներ

Կազմակերպության և Բերդի «Սորաններ» դենդրոպարկի աշխատակիցների կողմից բացվել է զբոսաշրջային նոր արահետ /15 մասնակից/:

Կազմակերպության ենթակայությամբ գործող Բերդի «Սորաններ» դենդրոպարկ կազմակերպվել այց, որի նպատակն էր ծանոթանալ տարածքի կենսաբազմազանությանը և էկոտուրիզմի զարգացման հնարավորություններին: Այցելությունն իրականացվել է «ԼԻԼԱ» ծրագրի շրջանակում, որը իրականացվում է WWF-Հայաստանի կողմից՝ «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ և Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության ֆինանսավորմամբ /10 մասնակից/:

Սեպտեմբերի 7-13-ը «Արահետներ փոփոխության համար» ՀԿ-ի նախաձեռնությամբ միջազգային և տեղական ուժերը համախմբվելով՝ սկսել են աշխատանքներ հենց Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկից: Միջազգային

կամավորներ միասին բարեկարգեցին ավելի քան 2.5 կմ արահետ, որը կապում է դենդրոպարկը Կուրթան գյուղի հետ: Այս աշխատանքները մասն են կազմում Տրանսկովկասյան արահետի սպասարկման, որն իր 832 կմ երկարությամբ հյուսիսից հարավ անցնում է ողջ տարածաշրջանով: Արահետների խնամքն ու բարեկարգումը հնարավորություն են տալիս զբոսաշրջիկներին օգտվել անվտանգ և անցանելի ուղիներից, ինչը խթանում է էկոտուրիզմի զարգացումը և Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկի ճանաչելիությունը:

2025 թվականի ընթացքում Կազմակերպության ենթակայության տակ գտնվող «Ջրվեժ» անտառպարկում ունեցել ենք թվով 38856, Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկում՝ թվով 66473, Բերդի «Սորաններ» դենդրոպարկում՝ թվով 1623 և «Զիկատար» պետական արգելավայրում թվով՝ 301 այցելուներ:

2.5. Հասարակության լայն մասսաների իրազեկվածությանն ուղղված միջոցառումներ՝

- «ՄԻՐ» հեռուստաընկերության կողմից նկարահանվել և լուսաբանվել է Կազմակերպության ենթակայությամբ գործող Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկում փոշոտման ակտիվ շրջանը:
- «Տավուշ ՀԸ»-ն լուսաբանել է Բերդի «Սորաններ» դենդրոպարկում Շրջակա միջավայրի համաշխարհային օրվան նվիրված միջոցառումը:
- Հանրային հեռուստաընկերությունը նկարահանել է գիտական դաշտային արշավը «Որդան Կարմիր» պետական արգելավայրում:

3. «Էրեբունի» պետական արգելոցում և հարակից տարածքներում, ՀՀ կարմիր գրքում գրանցված տեսակների գիտական ուսումնասիրություն, մոնիթորինգի իրականացում՝

Իրականացված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվեց, որ պահպանվել է արգելոցի տեսակային կազմը: ՀՀ կարմիր գրքում գրանցված Ցորեն բեոտական-Triticum boeoticum տեսակի առանձնյակները ցածրահասակ էին, մասսայական տարածված, իսկ Ցորեն ուրատու-Triticum urartu և Ցորեն արարատյան-Triticum araraticum տեսակները հանդես էին գալիս ցորեն բեոտականի ցանքերում առանձին կղզյակների տեսքով: Կախված լանջերի

կողմնադրությունից վերջիններիս բարձրությունը տատանվում էր՝ 60-80 սմ-ի սահմաններում:

ՀՀ կարմիր գրքում գրանցված Վարդատերեփուկ մուշկայինը-Amberboa moschata արգելոցի տարածքում այս տարի լայն տարածված էր, իսկ Կանգար վարդագույնը-Gundelia rosea հանդես էր գալիս մեկական առանձնյակներով: Թարմացվում են ուսումնասիրությունների ընթացքում հավաքված հերբարիումները: Հրդեհավտանգ շրջանին ընդառաջ արգելոցի տարածքում իրականացվել են հողի հանքայնացման աշխատանքներ:

4. «Որդան կարմիր» պետական արգելավայի ֆլորայի և ֆաունայի ուսումնասիրություն՝

Կատարվել է ուսումնասիրություն «Որդան կարմիր» արգելավայրում: Արազափի տեղամասի փորձահրապարակներում միջինում հաշվառվեց 9/ինը/ բույս՝ որդանախոտ: Որդանախոտը-Aeluropus հանդես էր գալիս կղզյակների տեսքով: Արազափի տեղամասում գոյացել էին ջրային կուտակումներ:

Ջրառատի տեղամասում բուսականությունը փառթամ էր, փորձահրապարակներում միջինում հաշվառվեց 13/տասներեք/ բույս՝ որդանախոտ: Ցուցակները կցվում են:

Կատարած ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ֆլորայի կազմը փոփոխություն չէր կրել: Հավաքվել են որոշ բուսատեսակներ հերբարիումների թարմացման նպատակով: Հրդեհավտանգ շրջանին ընդառաջ արգելավայրի տարածքում իրականացվել են հողի հանքայնացման աշխատանքներ:

Իրականացվել է Արարատյան որդան կարմիր – Porphyrophora hammelii միջատի հաշվառում:

Ջրառատի տեղամասում միջատները հանդես էին գալիս անհատներով, վերջիններս հանդիպում էին այն հատվածներում որտեղ Որդանախոտը - Aeluropus այլ բուսուտների հետ չէր՝ միայն Որդանախոտ էր և Եղեգ - Phragmites:

Հաշվառումը իրականացվել է երթուղային եղանակով, 3 երթուղիներում՝ յուրաքանչյուրը 50մ երկարությամբ միջինում հանդիպել են 6 էգ առանձնյակ:

Արազափի տեղամասում պատկերն այլ էր՝ Որդանախոտը այլ բույսերի հետ կազմել էր համակեցություն և այդ տարածքներում էլ միջատները հանդես էին գալիս խմբերով: Արազափի տեղամասում վերջիններիս քանակը անհամեմատ ավելի շատ էր:

Առավել խիտ հատվածներում առանձնացրել ենք յուրաքանչյուրը 1 քառ. մետր մակերեսով 6 փորձահրապարակներ, որոնցում միջինում հաշվել ենք 12 էգ առանձնյակ:

Արազափի տեղամասում արու միջատների ակտիվությունը ավելի նկատելի էր:

Ջրառատի տեղամասում որդանախոտն ուղեկցվում է եղեգով, որը նույնպես միջատի համար կերաբույս է հանդիսանում, իսկ Արազափի տեղամասում Որդանախոտը ուղեկցվում է Կռատուկով - Arctium և Ուղտափշով – Alhagi, որոնք ճնշում են Որդանախոտին:

5. «Ջերմուկի ջրաբանական» և «Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրերի ֆլորայի և ֆանունայի ուսումնասիրությունների իրականացում, ջրհավաք ավազանների վիճակի գնահատում՝

«Ջերմուկի ջրաբանական» պետական արգելավայր.

Գիտարշավը իրականացվել է Կարմրաշեն և Հերհեր գյուղերի հարակից տարածքներում, որոնք միանում են արգելավայրի տարածքին: Այդ տարածքներում հանդիպել ենք Վարդազգիների-Rosaceae, Բարդածաղկավորների-Asteraceae, Խլածաղկազգիների-Scrophulariaceae,Կակաչազգիների-Papaveraceae, Մեխակազգիների-Caryophylaceae, Հացազգիների-Poaceae, Ականքազգիների-Dipsacaceae ընտանիքներին պատկանող բուսատեսակներ, որոնք բնորոշ են կիսաանապատային, նոսրանտառային գոտիներին:

Հանդիպել են՝ Vebuscum-Խոնդատ, Dianthus-Մեխակ, Helichrysum-Անթառամ, Xeranthemum-Անմեռուկ, Festuca-Շյուղախոտ, Achillea-Հազարատերևուկ, Althaea rosea-Տուղտավարդ, Papaver-Կակաչ, Tragopogon-Սինձ և այլ տեսակներ:

Ծառաթփատեսակներից հանդիպել են՝ Crataegus-Սզնի, Spiraea-Ասպիրակ, Rosa-Մասրենի, Pyrus-Տանձենի: Թարմացվում են ցուցակները:

Գետերը սակավաջուր էին, և ըստ իրականացված դիտարկումների՝ Հերհերի ջրամբարի ջրի մակարդակը այս տարի նկատելիորեն ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

«Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայր.

Մոնիթորինգի ընթացքում պարզվեց, որ բուսականությունը նախորդ տարիների համեմատ որոշ չափով ճնշված էր, ջրային աղբյուրներից մի քանիսը՝ ցամաքած: Մարմարիկ գետը վարար չէր, իսկ ջրամբարի ջրի մակարդակը զգալիորեն ցածր էր նախորդ տարվա համեմատ:

Անոթավոր բույսերը ուղեկցվում էին Խնձորենու-Malus, Ուռենու-Salix, Մասրենու-Rosa, Գիհու- Juniperus համակեցություններով, որոնք պատկանում էին Հացազգիների-Poaceae, Բարդածաղկավորների-Asteraceae, Սրոհունդազգիների-Hypericacea, Զանգակազգիների-Campanulaceae, Գորտնուկազգիների-Ranunculaceae, Խորդենազգիների-Geraniaceae, Մատիտեղազգիների-Polygonaceae ընտանիքների հետևյալ տեսակներին՝

Սուսամբար-Tanacetum

Մանդիկ-Polygonum

Մարգագետնային խորդենի-Geranium praterse L.

Տերեփուկ-Centaurea

Գորտնուկ-Ranunculus

Զանգակ-Campanula

Սրոհունդ խոցված-Hypericum perforatum L.

Օշինդր դառը -Artemisa absirthium L.

Դաշտավլուկ-Poa

Երիցուկ երիցուկանման-Matricaria matricaroides

Երեքնուկ մարգագետնային-Trifolium pretense

Հավաքված նյութերը համեմատվում են ցուցակների հետ, վերջիններս շտկվում են:

6. «Զիկատար» պետական արգելավայրում Ֆլորայի և ֆաունայի ուսումնասիրությունների իրականացում: Սերմնային վերականգնման ուսումնասիրություն ծառուտներում, վիճակի գնահատում՝

«Զիկատար» պետական արգելավայրում կատարված ուսումնասիրությունների և մոնիթորինգի շրջանակներում առարձնացվեց 2 հատված՝ արգելավայր, որտեղ բնական անտառն էր, իրենց հատուկ ծառաթփատեսակներով, և այցելուների կենտրոնի հարակից կանաչապատված տարածքը, որտեղ ծառատունկ է իրականացվում թե՛ պտղատու և թե՛ դեկորատիվ ծառաթփատեսակներով:

Արգելավայրի տարածքում աճում են Հաճարենի-Fagus, Կաղնի-Quercus, Բոխի-Carpinus, որոնք հիմնական անտառկազմող տեսակներն են, վերջիններս ուղեկցվում են Լորենու-Tilia, Թխկու-Acer, Հացենու-Fraxinus տեսակներով: Արգելավայրի հյուսիսային լանջերում տարածված էր Հաճարենին՝ հաճարկուտ, վերջիններիս բնական սերմնային վերարտադրությունը գտնվում էր լավ վիճակում: Հարավային լանջերում Կաղնուտ էր, որի ուղեկցող տեսակներից մեկը վայրի Տանձենին- Pirus է: Կաղնու բնական ինքնացանը նույնպես լավ վիճակում էր:

Արգելավայրի տարածքում հանդիպում են Մասրենու-Rosa, Մոշենու-Rubus, Հոնի-Cornus, Ձկեռի-Mespilus, թփեր: Մոնիթորինգի ընթացքում արգելավայրի տարածքում արածեցման դեպքեր չեն գրանցվել:

Արգելավայրի հատուկ առանձնացված տարածքում՝ տնկարանում ցանվել էին կաղնու և ձիակասկի սերմեր, դրվել էին գիհու կտրոններ: Վերջիններս գտնվում էին լավ վիճակում: Քանի որ, ծնեբեկը պահանջում է հատուկ մշակություն, այդ իսկ պատճառով դաշտը ուներ խնամքի կարիք:

Այցելուների կենտրոնի հարակից հատվածի Մայրու-Cedrus ծառերից մեկը գագաթի հատվածից կոտրվել էր, ինչպես նաև արձանագրվեց Կեչիի-Betula մեկ չորացած ծառ, որը ուժգին քամու հետևանքով հավանական է քամատապալ լինի և հասցնի վնաս:



Արգելավայրի թույալատրելի տարածքում (պտղատու այգի, կանաչապատված տարածք, տնկարան) տարվում են խնամքի աշխատանքներ՝ քաղհան, ծառերի էտ: Լրացումներ անելու նպատակով փորվել են փոսեր: Հավաքվել են Արջատխլենու և Ձիակասկի սերմեր:

Պտղատու այգու տարածքը մաքրվել է ՝ էտվել են չորացած ճյուղերը, հավաքվել տերևները, բուսազրկվել և փխրեցվել է հողը: Լրացման կարգով տնկվել են Տանձենու-Pyrus, Բարդու-Populus տնկիներ: Հավաքվել են Ծնեբեկի-Asparagus, Տանձի-Pirus, Խնձորենու-Malus, Լորենու-Tilia, Կաղնու-Quercus, Մայրու-Cedrus սերմեր:

7.Դենդրոպարկերում՝ Ստեփանավանի «Սոճուտ», Վանաձորի «Ժ. Սարուխանյանի անվան», Իջևանի «Դենդրոպարկ», Բերդի «Սորաններ» դենդրոպարկերում և «Ջրվեժ» անտառպարկում բնական ու ներմուծված ծառաթփատեսակների բազմազանության և ֆլորայի հետազոտում, տեսակային կազմի՝ տեղական և ներմուծված ծառաթփատեսակների համալրման միջոցառումներ և վիճակի գնահատում:

- **Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկ**

Դենդրոպարկի ծառաթփատեսակների տեսակային կազմը փոփոխություն չի կրել: Դենդրոպարկը խնամված է, ավելի վաղ մեր բաժանմունքի աշխատակիցների կողմից դենդրոպարկ է տեղափոխվել Նարդոսի-Lavandula, Սանտոլինի-Santolina և Հեյխերայի-Heuchera թփեր: Ցանվել են Գետնանոճու-Chamaecyparis սերմեր վերջիններս ծլել են: Դենդրոպարկում տնկվել են Մայրու-Cedrus տնկիներ: Վնասատուների դեմ կատարվել է քիմիական պայքարի աշխատանքներ: Հնձվել է խոտը:

Դենդրոպարկում կատարվել է քաղհան փխրեցում, դրվել են Թույայի, Գիհու, Վարդի կտրոններ, հավաքվել են Եղևնու սերմեր: Հնձվել է խոտը, ցնցուղով ջրվել են ծաղիկները: Ավազապատվել է արահետը: Ցանկապատի փշալարերն անցկացնելու համար փորվել են փոսեր: Դրվել են կտրոններ և ցանվել սերմեր:

Դենդրոպարկի տարածքը մաքրվել է բուսական մնացորդներից, հավաքված թափուկը դուրս է բերվել տարածքից: Մաքրվել և հեռացվել են մոլախոտերը, մոշի թփերը և չորացած ճյուղերը: Դրախտավարդի-Hydrangea ճյուղերը պահվել են խրամատում, գարնանը կտրոնավորվելու նպատակով: Հավաքվել են Եղևնու սերմեր: Ծածկվել են Վարդի-Rosa թփերը՝ ցրտահարությունից խուսափելու համար:

- **Վանաձորի «Ժ. Սարուխանյանի անվան» դենդրոպարկ**

Դենդրոպարկի տարածքը մաքուր էր և խնամված, ծառաթփատեսկների տեսակային կազմը պահպանված էր:

Դենդրոպարկ էր ներմուծվել և տրվել ծաղկային լուծումներ հետևյալ տեսակներով՝ Մատնունի-Potentilla, Ճանկխոտ-Ajuga, Նարդոս- Lavandula և շտամպ վարդի թփեր:

Գիտարշավի ընթացքում Սոճու-Pinus ծառուղում գրանցվեց մեկ թեքված սոճի և մեկ սոճի որի գագաթը կոտրվել էր:

- **Բերդի «Սորաններ» դենդրոպարկ**

Տարվում են աշխատանքներ դենդրոպարկի տեսակային կազմի ճշտման ուղղությամբ: Նախորդ տարում արձանագրվել էր, որ Բուդլեյա Դավիդի-Buddleia davidi-ի տեսակը չորացել է, Կազմակերպության ենթակայությամբ գործող «Ջրվեժ» անտառպարկի տնկարանից դենդրոպարկ է տեղափոխվել և տնկվել վերը նշած թփատեսակը: Դենդրոպարկ են տեղափոխվել Մոխրածաղիկ-Cineraria, Հեյխերա-Heuchera, Սանթոլին-Santolina, Կուսածաղիկ-Vinca, Իլենի-Euonymus վերջինիս գեղազարդ տեսքը ապահովվելու համար: Տոսախ-Buxus թփատեսակով ստեղծվել է կենդանի ցանկապատ:

Դենդրոպարկում տարվում են խնամքի և տարածքի մաքրման աշխատանքներ:

Ձեռքի սրսկիչով կատարվել է քիմական պայքարի աշխատանքներ: Հնձվել և հավաքվել է խոտը: Դրվել Են Տոախի-Buxus կտրոններ:



Բացվել և մաքրվել են արահետները, ծառերի չորացած ճյուղերը էտվել են, բուսական մնացորդները դուրս են բերվել տարածքից, հնձվել է և հավաքվել է խոտը: Տնկարանում իրականացվել է քաղհան փխրեցում, պարարտացվել է տնկանյութը, ոռոգվել տարածքը: Իրականացվել է քիմիական պայքարի

աշխատանքներ: Ջրվեժ անտառպարկի տնկարանից դենդրոպարկ է տեղափոխվել դեկորատիվ խոտաբույսեր ծաղկային լուծումներ տալու նպատակով:

Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկից Բերդի «Սորաններ» դենդրոպարկ են տեղափոխցել Սոճի Արմանդիի – Pinus Armandii տնկիներ՝ տեսակային կազմի հարստացման նպատակով և Դրախտավարդի-Hydrangea թփեր, որոնցով տրվել է գեղազարդ լուծումներ, այսպիսով դենդրոպարկի ծառաթփատեսակների կազմը հարստացավ երկու նոր տեսակներով:

Տնկվելեն Տանձենու-Pirus և Տոսախի-Buxus տնկիներ, տնկարանի տարածքը մաքրվել է մոլախոտերից՝ քաղհան: Կառուցվել են տաղավարներ:

- **Իջևանի «Դենդրոպարկ»**

Կատարվել է ուսումնասիրություն Իջևանի «Դենդրոպարկ»-ի վարձակալված տարածքում:

«Կանաչ սիմֆոնիա» ՍՊԸ-ի կողմից վարձակալված տարածքում արձանագրվեց ընկած ծառեր, որոնք համարակալվել և արձանագրվել էին որպես չորացած ծառեր վերջին գարնանային ստուգումների ժամանակ: Տարածքում չէին տարվել խնամքի աշխատանքներ, խոտը հնձված չէր:

«Իջևանի գինու, կոնյակի գործարան» ՓԲԸ-ի վարձակալած տարածքում ևս արձանագրվեց ընկած ծառեր: Տարածքի խոտը հնձված չէր: Ծառաթփատեսակների տեսակային կազմը պահպանված է:

Հավաքված հերբարումների հիման վրա ճշտվում են դենդրոպարկի տեսակային կազմի ցուցակները:

- **«Ջրվեժ» անտառպարկ**

Անտառպարկի տարածքում տարվում են աշխատանքներ տեսակային կազմի պահպանման և հարստացման ուղղությամբ: Անտառպարկի տեսակային կազմի հարստացման նպատակով 2024 թվականին ներմուծված նոր՝ Սոճազգիների-Pinaceae ընտանիքին պատկանող Մայրի ատլասյան-Cedrus atlantica, Սոճի Արմանդի-Pinus Armandii և Վարդազգիների Rosaceae ընտանիքի Կերիա ճապոնական-Kerria japonica (L.) D ծառաթփատեսակների մոտ նկատվել է աճի դրական դինամիկա, դիտարկումները շարունակվում են:

Գիտահետազոտական և կլիմայավարժեցման նպատակով ցանված, սակավաթիվ Սեքվոյա հսկայականի – Sequoiadendron giganteum, Էլդարյան սոճու- Pinus eldarica և Սոճի արմանդի- Pinus armandii սերմնաբուսակները գտնվում են լավ վիճակում: Կազմակերպության Գիտության և էկոտուրիզմի զարգացման բաժանմունքի աշխատակիցների և Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի միջատաբանության և բնահողի կենդանաբանության լաբորատորիայի մասնագետների համագործակցության շրջանակում «Ջրվեժ» անտառպարկում իրականացվել են հիվանդությունների և վնասատուների հայտնաբերման ու ուսումնասիրության աշխատանքներ: Վերցվել են փորձանմուշներ լաբորատոր պայմաններում ստուգելու համար: «Ջրվեժ» անտառպարկում տեղադրվել է միջատաբանական որսաթակարդ:

Հիվանդություններով և վնասատուներով վարակված օջախներում կատարվել են քիմիական պայքարի աշխատանքներ: Հնձվել է ճանապարհամերձ հատվածների խոտը: Մասնակի վերանորոգվել է ոռոգնման ջրագծերը, հունիսին անտառպարկի տարածքը ոռոգվել է: Հրդեհավտանգ շրջանին ընդառաջ առավել վտանգավոր հատվածում իրականացվել են հողի հանքայնացման աշխատանքներ:

Ծառատունկին ընդառաջ փորվել են փոսեր: Կատարվել է ճանապարհաեզրերի ճյուղերի էտ, որոնք հրդեհի պարագայում կարող են խոչնդոտել հրշեջ մեքենաների օպերատիվ աշխատանքին: Կատարվել է պրոֆիլակտիկ բուժում սնկասպան պատրաստուկներով:

Անտառպարկում տնկվել են Օճառածառի-Sapindus, Բարդու-Populus, Գիհու- Juniperus, Հացենու-Fraxinus Բաղրջուկի (հիբիսկուսի)-Hibiscus, Կաղնու- Quercus, Ձիակասկի-Aesculus տնկիներ:

Հավաքվել են՝ Բիոտայի-Biota, Ձիակասկի- Aesculus, Թխկու-Acer սերմեր

Սոճի Արմանդի – Pinus Armandii

Սոճի էլդարյան - Pinus eldarica

Սեքվոյա – Sequoia

8. Կազմակերպության եթակայությամբ գործող տարածքներում, իրականացվել է աշնանային ստուգումներ, հաշվառվել տնկանյութը, համարակալվել և պիտակավորվել են քամպատապալ ծառերը, կազմվել է հաշվեգնահատման ցուցակներ:

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի
տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Արսեն Միրզոյան

Կատ.՝

գիտության և էկոտուրիզմի զարգացման բաժանմունքի պետ՝Հայարփի Գրիգորյան

գիտական աշխատող՝ Սոնա Վարդանյան

էկոտուրիզմի մասնագետ - գիտական աշխատող՝ Սոնա Վարազյան